

2.7. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2.7.1. Սոցիալական ոլորտ

Հաշվետվություն ներկայացնող կազմակերպությունների ծանրաբեռնվածությունը հնարավորինս նվազեցնելու և տեղեկատվական դաշտի կանոնակարգման նկատառումներից ելնելով, կրճատվել են թվով 2 հաշվետվական ձևեր:

Սոցիալական ոլորտի տեղեկատվական բազայի տվյալների համալրման նպատակով Շվեդիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի մեթոդաբանական օժանդակությամբ, Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ 2007թ. իրականացվել է «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների կենսապայմանների» ընտրանքային հետազոտություն: Հետազոտության նպատակը հանրապետության սոցիալապես ամենախոցելի խմբերից մեկի՝ հաշմանդամների կենսապայմանները բնութագրող ցուցանիշների (մասնավորապես, սոցիալական վիճակի, բնակության պայմանների, սոցիալական պաշտպանվածության, առողջության վերականգնման և պահպանման հիմնահարցերի, բարոյահոգեբանական վիճակի, զբաղվածության հիմնահարցերի, կրթության) առավել ընդգրկուն համակազմով տեղեկատվական համակարգի ձևավորումն է:

Վարչական ռեգիստրների ներդրման և շարունակական կատարելագործման նկատառումներով պայմանավորված, համապատասխան վարչական վիճակագրություն իրականացնող պետական կառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում ներդրվել են մի շարք վարչական վիճակագրական հաշվետվական ձևեր: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համատեղ մշակվել և ներդրվել են «Մանկական քանակակազմի, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի, կանխարգելիչ պատվաստումների, պատահական ծակոցների, բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ» Ձև թիվ Պ-1/հ (ամսական, տարեկան), «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների և օժանդակ պարագաների շարժի մասին» Ձև թիվ Ձև թիվ Պ-2/հ (ամսական, տարեկան), «Պատվաստումներում ընդգրկվածության և կորստի մակարդակի վերաբերյալ» Պ-3/հ (եռամսյակային, տարեկան), «Կառավարելի վարակիչ հիվանդությունների վերաբերյալ» Ձև թիվ Պ-4/հ (ամսական, տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվական ձևերը, հնարավորություն կրնձեռելով բարելավել իմունականխարգելման գործընթացի մոնիթորինգի համակարգը և լիարժեք ու ամբողջական գնահատելու պատվաստումների իրավիճակը: Ընթացքի մեջ են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (նախադպրոցական, նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության վարչական վիճակագրության ներդրման) և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի հետ՝ վարչական ռեգիստրների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Տարեկան պարբերականությամբ հրատարակվել է.

1. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է կրթության, գիտության, առողջապահության, սոցիալական ապահովագրության և ապահովության, գրադարանների

գործունեության, մշակույթի, արխիվային գործի, նոտարական գործունեության, արտոնագրման, ստանդարտացման, չափագիտության ու սերտիֆիկացման, իրավական ոլորտի վերաբերյալ ընթացիկ տարվա քանակական բնութագրիչները, ինչպես նաև որոշ ցուցանիշների նախորդ տարիների դինամիկ շարքերը:

2. «Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է բնակարանային ֆոնդի, անշարժ գույքի շուկայի, համայնքների ջրամատակարարման, կոյուղացման, գազաֆիկացման, ջերմամատակարարման, քաղաքային բնակավայրերի սանիտարական մաքրման, քաղաքային հողերի և կանաչապատ տարածքների վերաբերյալ ընթացիկ տարվա քանակական բնութագրիչները, ինչպես նաև որոշ ցուցանիշների նախորդ տարիների դինամիկ շարքերը:

2.7.2. Բնապահպանություն

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են բնապահպանական վիճակագրության կատարելագործման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որոնք ուղղորդված են եղել մի կողմից՝ համապատասխան ոլորտի վարչական վիճակագրության կատարելագործմանը (վարչական ռեգիստրների ներդրման ու կայացման համատեքստում), մյուս կողմից՝ պաշտոնական վիճակագրության շրջանակում հավաքագրվող ցուցանիշների համախմբի ընդլայնմանը (այդ թվում՝ մարզային տեղեկատվական բազաների վարման աշխատանքների կատարելագործման միջոցով): Ընթացքի մեջ են նաև ազգային հաշիվների համակարգում բնապահպանական սատելիտային հաշիվների բաղադրիչների ներդրման աշխատանքները:

Շարունակվել է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ՝ բնապահպանական ներդրումների և ծախսերի ամբողջական և միասնական հաշվառման վարչական վիճակագրական հաշվետվության ձևերի մշակման ու հաշվառման մեթոդաբանությունների ներդրման, ջերմոցային գազերի հաշվառման ռեգիստրի ներդրման ու վարման, ինչպես նաև շարժական աղբյուրներից արտանետումների հաշվառման մեխանիզմների կատարելագործման ուղղություններով: Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համատեղ մշակվել և համապատասխան վարչական ռեգիստրում ներդրվել է շրջակա միջավայրի հիգիենայի ցուցանիշների հաշվառման մեխանիզմներն ու մեթոդաբանությունը: Շարունակվում են շրջակա միջավայրի բացասական ներգործությամբ պայմանավորված մարդու առողջության բնութագրիչների (ցուցանիշների) հաշվառման աշխատանքները: Բնապահպանական վիճակագրության բարելավման, ամբողջականացման, միջազգային համադրելիության ապահովման նպատակով վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների հետ համատեղ աշխատանքների արդյունքում մշակվել են վարչական վիճակագրությունների վարման համապատասխան նորմատիվային փաստաթղթեր, պարբերաբար ճշգրտվել է վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկը, ներդրվել են համապատասխան դասակարգիչները, ինչպես նաև իրականացվել համատեղ հրապարակումներ:

Բնապահպանական ոլորտի տեղեկատվական հիմնապաշարների համալրման նպատակով Շվեդիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի մեթոդաբանական օժանդակությամբ, Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ 2008թ. իրականացվել է «Բնապահպանական ծախսերը Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին» ընտրանքային հետազոտություն: Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգում բնապահպանական սատելիտային հաշիվների ներդրմանն օժանդակող հետազոտությունը նպատակ է հետապնդել պարզելու կազմակերպությունների կողմից բնապահպանական ներդրումների (կապիտալ ծախսերի) ու ընթացիկ ծախսերի կատարումը և հաշվառումը, բնապահպանական ընթացիկ ծախսերի կատարումը և հաշվառումը, բնապահպանական նշանակության սպրանքների և ծառայությունների թողարկումը, բնօգտագործման և բնապահպանական վճարների կատարումը, բնապահպանական ծախսերի ամբողջական հաշվառման մեխանիզմի մշակումը, բնապահպանական ծախսերի հաշվառմանն առնչվող այլ հարցեր:

Շարունակվել են նաև վիճակագրական հրապարակումներում աշխարհագրական տեղեկատվական համակարգի ներդրման, էկոլոգիական ատլասների կազմման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Տարեկան պարբերականությամբ հրապարակվել է «Բնական պաշարները և շրջակա միջավայրը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է հիդրոօդերևութաբանական պայմանների, անտառային տնտեսության և բնության հատուկ պահպանվող տարածքների, երկրաբանահետախուզական աշխատանքների, պահպանության կարիք ունեցող հողերի, մթնոլորտային արտանետումների, ջրօգտագործման և ջրհեռացման, թափոնների շարժի, բնապահպանական և բնօգտագործման վճարների, բնապահպանական ընթացիկ ծախսերի, շրջակա միջավայրի մոնիթորինգի, բնապահպանական իրավախախտումների, արտակարգ իրավիճակների և այլնի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը (այդ թվում՝ քարտեզային ներկայացմամբ և դինամիկ շարքերի տեսքով):

2.7.3. Տնային տնտեսությունների հետազոտություններ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունները՝ կիրառելով աղքատության մակարդակի գնահատման վերանայված մեթոդաբանություն: 2007-2009թթ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություններն իրականացվել են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և «Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ–Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՄՀ–Հայաստան) համաֆինանսավորմամբ և 2007-2009թթ. համար կազմել տարեկան 7872 տնային տնտեսություն:

Բնակչության աղքատությունը և կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշների ամբողջականացման և արդիականացման նպատակով ապահովվել է տնային տնտեսությունների հետազոտությունների ընտրանքի ներկայացուցչականությունը, որը հնարավորություն է ընձեռել այդ ցուցանիշները հաշվարկել և հրապարակել մարզային կտրվածքով:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթի համապատասխան հարցերի վերանայման և փոփոխման միջոցով կատարելագործվել է աղքատության ոչ նյութական ցուցանիշների (կրթություն, առողջապահություն, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և բնակարանային պայմաններ) համախումբը: Մասնավորապես, հարցաթերթի «Առողջություն և առողջապահություն» բաժինը համապատասխանեցվել է 2006թ.-ին իրականացված տնային տնտեսությունների պիլոտային հետազոտության արդյունքում փորձված մոդուլով:

Շվեդիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի մեթոդաբանական օժանդակությամբ և Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ 2008թ. հոկտեմբերի 1-ից 31-ը իրականացվել է «Ժամանակի օգտագործում» հետազոտությունը, որի նպատակն էր ուսումնասիրել արդյունավետ գործունեության համար (վճարվող և չվճարվող աշխատանք, ուսում) ժամանակի օգտագործումը, ազատ ժամանակի առկայությունը և օգտագործումը, ժամանակի օգտագործման գենդերային և մի շարք այլ բնույթի հարցեր: Հետազոտության արդյունքներով հրապարակվել է գեկույց՝ հայերեն և անգլերեն:

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ՊՈԱԿ-ի և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջև կնքված պայմանագրի համաձայն, Ծառայությունն անցկացրել է 2008թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության ընտրանքում ընդգրկված գյուղական համայնքների հետազոտություն, որի նպատակն էր համայնքների մակարդակով հավաքագրել առավել համապարփակ տեղեկատվություն՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի ազդեցությունը գյուղական համայնքների տնային տնտեսությունների կենսամակարդակի բարձրացմանը նպաստելու գործում գնահատելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է նաև Աղքատության հաղթահարման ռազմավարական և Կայուն զարգացման ծրագրերի մոնիթորինգի համար անհրաժեշտ՝ աղքատության նյութական և ոչ նյութական ցուցանիշների շարունակական ամփոփումն ու հրապարակումը:

2.7.4. Պարենային ապահովություն

Պարենային ապահովության վիճակագրության վարումն իրականացվել է 2007-2009թթ. եռամյա ծրագրով, ինչպես նաև 2008թ. Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև ստորագրված «Պարենային ապահովության ծրագիր» 2007/019-124 ֆինանսական համաձայնագրով սահմանված նախապայմաններով:

Հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող մակրոտնտեսական, սոցիալական ոլորտի, գների և գների ինդեքսների, պարենի առկայության (գյուղատնտեսության, բույսերի պաշտպանության և հողերի բարելավման, ագրոօդերևութաբանական տեղեկատվության, պարենամթերքի արտաքին առևտրի), անտառպահպանության, անտառպաշտպանության և անտառվերականգնման միջոցառումների և տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, աղքատության վերաբերյալ ցուցանիշները:

Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ու Եվրոպական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած մեթոդաբանության համաձայն, հաշվետու ժամանակահատվածում կազմվել են առանձին ապրանքախմբերի ազգային պարենային հաշվեկշիռները՝ 2006-2008թթ. համար:

2007թ. և 2008թ. իրականացվել են Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից ստեղծված պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի համար տեղեկատվության հավաքագրման, ստուգման, ծածկագրման, մուտքագրման աշխատանքները:

2.7.5. Ժողովրդագրություն

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են հանրապետության գյուղական բնակչության սեռա-տարիքային կազմի հաշվառման աշխատանքները՝ համապատասխան պետական վիճակագրական հաշվետվության ձևի միջոցով: Գյուղական բոլոր համայնքներից (866) հավաքագրված տվյալների հիման վրա ամփոփվել են այդ գյուղական համայնքների տնային տնտեսությունների քանակի (ընդամենը և առկա), մշտական, առկա և երկարատև բացակայող բնակչության թվաքանակի, ինչպես նաև առկա բնակչության կառուցվածքի՝ ըստ առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների՝ գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղված անդամների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ: Հաշվետվությունների տվյալների ամփոփման արդյունքներով պատրաստվել է նաև հանրապետության գյուղական համայնքների (բնակավայրերի) ցանկն ըստ մարզերի և բնակչության թվաքանակի:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններից ամսական պարբերականությամբ ստացված՝ ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերի մշակման արդյունքում ստացվել են ամենամսյա օպերատիվ ցուցանիշներ՝ հանրապետության մարզերի և տարածաշրջանների քաղաքային/գյուղական կտրվածքով, իսկ տարեկան պարբերականությամբ՝ բնակչության բնական շարժը բնութագրող մանրամասնեցված ցուցանիշներ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության տարածքային անձնագրային բաժիններից ստացված Եկողի և Մեկնողի հասցեաթերթիկների վիճակագրական մշակման արդյունքում ստացվել են միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ եռամսյակային օպերատիվ ցուցանիշներ և բնակչության միգրացիոն տեղաշարժերը բնութագրող մանրամասնեցված տարեկան վիճակագրական ցուցանիշներ:

Բնական շարժի ամսական և մեխանիկական շարժը բնութագրող եռամսյակային օպերատիվ ցուցանիշների հիման վրա, 2007-2009 թթ. համար՝ տարեկան և եռամսյակային պարբերականությամբ, արդիականացվել են հանրապետության մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշներն՝ ըստ մարզերի, տարածաշրջանների, քաղաքային և գյուղական բնակավայրերի:

Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքների հիման վրա և բնական շարժի ու միգրացիայի ընթացիկ հաշվառման արդյունքներով, տարեկան

պարբերականությամբ, իրականացվել է մարզերի մշտական բնակչության սեռատարիքային կազմի հաշվարկ՝ քաղաքային և գյուղական կտրվածքով:

2002-2007թթ-ին երկրում արձանագրված սոցիալ-տնտեսական բարեփոխումների հետևանքով հանրապետության արտաքին և ներքին միգրացիոն միտումներում արձանագրված փոփոխությունները գնահատելու նպատակով, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ, 2007թ. սեպտեմբերին նախապատրաստվել և իրականացվել է Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն: Հետազոտության արդյունքներն ամփոփվել են «Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության» զեկույցում:

2008 թվականից «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի և «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի օժանդակությամբ նորացված համահարթեցման (ռեյքինգ) մեթոդաբանությամբ մշակվել և իրականացվել է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության և պաշտոնական վիճակագրության ընթացիկ հաշվառման տվյալներով ստացված Հայաստանի առկա և մշտական բնակչության թվաքանակների 2004-2008թթ. տարեկան ցուցանիշների հաշվարկ և հրապարակում:

Աշխատանքի միջազգային կազմակերպության ֆինանսական և խորհրդատվական աջակցությամբ 2009թ. նոյեմբերից սկսվել է հանրապետությունում աշխատանքային միգրացիայի ընտրանքային հետազոտություն անցկացնելու ծրագիրը, որը նպատակ ունի տնային տնտեսությունների շրջանում աշխատանքային միգրացիայից վերադարձած անձանց հարցման միջոցով գնահատելու հարկադիր աշխատանքը և մարդկանց շահագործումը (թրաֆիկինգը), հետազոտությանը նախորդող երկու տարիների ընթացքում: Արդեն իսկ մշակվել են հետազոտության անցկացման երկու հարցաթերթերը՝ ընդհանուր (ընտրանքում ներառված բոլոր տնային տնտեսությունների համար) և անհատական՝ (ընտրանքում հայտնված վերադարձած միգրանտների համար):

Նախապատրաստվել են «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին մարդահամար, 2010 թվականին փորձնական մարդահամար անցկացնելու և 2011 թվականի մարդահամարի համապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ ստեղծելու մասին» N 301-Ն որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետությունում 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի անդրանիկ նիստի աշխատանքները:

Տարեկան պարբերականությամբ հրապարակել է «Ժողովրդագրական ժողովածու» վիճակագրական ժողովածուն, որը ներառում է բնակչության թվաքանակի, բնական շարժի, ամուսնությունների ու ամուսնալուծությունների և ժողովրդագրական այլ ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը (այդ թվում՝ դինամիկ շարքերի տեսքով):